# ԶԱՐԹԷՔ

Կանչըս ձեզ՚ է, իմ եղբայրներ,
Եկէք բոլոր,
Եկէք կերտենք աշխարհ մը նոր:

. . . . . . . . . . . . . . . . .

Ով որ ունի սիրտ հըրակէզ,
Թող գայ հանդէս.
Ով որ ունի մըտքի քանքար,
Թող անպատճառ
Միանայ մեզ՚.
Ով որ ունի երազ մը վառ,
Թող բըռնէ վեր,
Ջահի մը պէս լուսապայծառ,
Լուսաւորէ որ Գործը մեր:
Ու մենք կերտենք աշխարհ մը նոր...
Ուր չըլլայ մարդ նօթի կամ մերկ,
Բուժենք բոլոր ցաւերն ու վէրք,
Ուրախութեան հընչէ թող երգն
Ամենուրեք...
Փոխենք երկիրը՝ եդեմի,
Չըմըտնէ հոն «Օձն» երկդիմի,
Եւ գայ այցի Աստուածն երբոր,
Տեսնէ Երազը ձեւաւոր,
Ըսքանչանայ,
Ադամորդին որ հողեղէն
Այսպէս կըրնայ,
Կերտել տաճար մը լուսեղէն,
Տիեզերքի սըրտին վըրայ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@